ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես կիրառել Աստվածաշնչի ուսումնասիրության այս մեթոդը

Աստվածաշնչի ուսումնասիրության այս մեթոդը առաջնորդներին հնարավորություն է տալիս իրենց խմբերում իրականացնել Աստվածաշնչյան հատվածների հետաքրքիր և ինտերակտիվ ուսումնասիրություն՝ պարզ միջոցներով: Այս մեթոդի պարզությունն ու խորությունը գրավում է բոլոր տարիքների և հավատքի բոլոր մակարդակների մարդկանց և օգնում է նրանց Աստվածաշնչյան հատվածները ուսումնասիրել սկզբից ինքնուրույն, այնուհետև՝ փոքր խմբերում:

Մեթոդն օգտագործվում է մասնակիցների կողմից, որպես ուղեցույց՝ շաբաթվա ընթացքում Աստվածաշնչյան հատվածների ինքնուրույն ուսումնասիրության համար, ինչպես նաև շաբաթվա վերջում այդ հատվածների խմբակային քննարկումը նախապատրաստելու համար:

5 օրվա ընթացքում մասնակիցները պետք է ամեն օր ընթերցեն ընտրված Աստվածաշնչյան հատվածը, աղոթեն այն հասկանալու համար և պատասխանեն յուրաքանչյուր օրվա համար նախատեսված հարցերին: Ամեն օր Սուրբ Հոգին օգնում է մեզ ավելի խորը և լիարժեք ըմբռնել ընտրված Աստվածաշնչյան հատվածի իմաստը և նոր մանրամասներ է բացահայտում մեզ համար: Մասնակիցները սովորում են ակտիվորեն ուսումնասիրել Աստծո Խոսքը, ինքնուրույն հասկանալ Աստծո փոխակերպող ճշմարտությունը և կիրառել այն կյանքում ՝ օգտագործելով Աստվածաշնչի ուսումնասիրության հետևյալ պարզ մոտեցումները.

- **<u>Հետազոտում</u>**
  Ինչի՞ մասին է խոսվում Աստվածաշնչյան այս հատվածում:
  Ո՞րն է գլխավոր գաղափարը:
- **<u>Մեկնաբանություն</u>**
  Ո՞րն է հատվածի իմաստը:
  Որո՞նք են գլխավոր խոսքերը, արտահայտությունները և ճշմարտությունները:
- **<u>Կիրառում</u>**
  Ինչպե՞ս է Սուրբ Հոգին ուղղորդում ինձ կիրառել Աստվածաշնչյան այս հատվածը իմ կյանքում:

Ինչպե՞ս խումբ ստեղծել և սկսել Աստվածաշնչի խմբակային ուսումնասիրությունը

Մենք հավատում ենք, որ Աստված ցանկանում է Ձեր միջոցով հարատև ազդեցություն գործել մարդկանց կյանքի վրա (Ձեր աշխատավայրում, բնակության վայրում, շրջապատում): Պետք է սկսել հետևյալ երեք քայլերից.

1. ԱՂՈԹԵՔ

... ամեն ինչ սկսվում է աղոթքից և փոխհարաբերություններից:

ԱՂՈԹՔ

- Աղոթեք այն ընկերոջ կամ ծանոթի համար, ով կօգնի Ձեզ ստեղծել խումբ և սկսել Աստվածաշնչի խմբակային ուսումնասիրությունը:
- Պարբերաբար աղոթեք միասին: Խնդրեք Աստծուց, որպեսզի նա բացահայտի իր ծրագիրը և ուղղորդի Ձեզ:
- Աղոթեք Ձեր քաղաքում կամ գյուղում զբոսնելիս: Խնդրեք Աստծո օրհնությունն ու հովանավորությունը:
- Աղոթեք մարդկանց համար անվանական՝ նշելով նրանց անունները: Խնդրեք Աստծուն, որ հնարավորություն տա Ձեզ ծանոթանալ այդ մարդկանց հետ, հոգ տանել նրանց մասին և օգնել նրանց: Հոգատարությունը բացում է մարդկանց սրտերը և ստեղծում է ամուր փոխհարաբերություններ:
- Աղոթեք, որպեսզի մարդկանց մոտ առաջանա հետաքրքրություն՝ Աստվածաշունչն ուսումնասիրելու և հասկանալու համար:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ծանոթացեք այն մարդկանց հետ, որոնք ապրում, աշխատում կամ շփվում են Ձեր շրջապատում: Եղեք բարեհամբյուր, կենսուրախ և քաջալերող:
- Նախաձեռնեք զրույցներ՝ հարցեր տվեք և եղեք ուշադիր ունկնդիր:
- Միասին ժամանակ անցկացրեք՝ սուրճ կամ թեյ ըմպեք, ճաշեք միասին:
- Առիթ գտեք, որպեսզի արտահայտեք Ձեր սերը, հետաքրքրվածությունն ու հոգատարությունը:

2. ՇՓՎԵՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ

... գտեք հետաքրքրված մարդկանց:

ՊԼԱՆԱՎՈՐԵՔ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

- Ընտրեք օրը, ժամը և վայրը:
- Կազմեք այն մարդկանց ցուցակը, ում Դուք ցանկանում եք տեսնել հանդիպմանը:
- Աղոթեք և հրավիրեք նրանց:
- Նախատեսեք հյուրասիրություն, եթե ցանկանում եք:
- Կազմեք զրույցի հարցերի ցանկը, կամ պլանավորեք ծանոթության գործընթացը Ձեր հանդիպման ժամանակ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- Եթե ունեք հնարավորություն, հանդիպման մասնակիցներին առաջարկեք սուրճ, թեյ և/կամ թեթև ուտեստներ:

- Ողջունեք հանդիպման մասնակիցներին, ներկայացեք և ծանոթացեք միմյանց հետ (հարցերի միջոցով կամ մշակված ընթացակարգի օգնությամբ), մարդկանց ժամանակ տվեք շփվելու և միմյանց ընկերակցությունը վայելելու համար:
- Հանդիպման ավարտին մասնակիցներին ասեք հետևյալը (կամ նույն միտքը՝ այլ ձևակերպմամբ). *«Ինչ հիանալի ժամանակ անցկացրեցինք միասին: Ես կուզենայի ստեղծել ապահով միջավայր և բարյացակամ, հոգատար մթնոլորտ, որտեղ մենք՝ մեր խմբով կարող ենք միասին ուսումնասիրել Աստվածաշունչը և հասկանալ, թե ի՞նչ է այն ասում և ինչպե՞ս է դա վերաբերում մեզնից յուրաքանչյուրին: Խնդրում եմ ինձ տեղյակ պահեք, արդյո՞ք Դուք հետաքրքրված եք:»*

3. ԿԱԶՄԱԿԵՐՊԵՔ

... այժմ սկսեք Աստվածաշնչի ուսումնասիրությունը:

- Ներբեռնեք և տպեք Աստվածաշնչի ուսումնասիրության ուղեցույցը՝ յուրաքանչյուր մասնակցի համար:
- Աստվածաշնչի ուսումնասիրության ուղեցույցից ընտրեք առաջարկվող Աստվածաշնչյան հատվածների չորս լրակազմերից որևէ մեկը:
- Մասնակիցները պետք է ունենան տետր կամ նոթատետր՝ իրենց մտքերն ու յուրաքանչյուր օրվա հարցերի պատասխանները գրանցելու համար:

<u>Ինչպե՞ս վարել Աստվածաշնչի խմբակային ուսումնասիրության դասը</u>

Սկսեք կարճ աղոթքից:

- Ընթերցեք ԼՈՒՅՍ սերիայի՝ ներքևում ներկայացված ներածական պատմությունը, որը բացատրում է Աստվածաշնչի ուսումնասիրության այս սերիայի թեմատիկան:
- Խնդրեք, որ ցանկացողները կարդան ուսումնասիրվող Աստվածաշնչյան հատվածը:
- Անցկացրեք քննարկում՝ հետևելով Աստվածաշնչի ուսումնասիրության ուղեցույցում յուրաքանչյուր օրվա համար նախատեսված հարցերին:
- Հարցերին պատասխաններին սպասելիս մի վախեցեք լռությունից: Նպատակը քննարկումն է, այլ ոչ թե այն, որ վարողը փորձի պատասխանել բոլոր հարցերին:

Արդյունավետ քննարկում ունենալու համար շատ կարևոր է խմբի մասնակիցներին պարբերաբար հիշեցնել հետևյալ օգտակար խորհուրդները.

- Խոսեք բարձր, որպեսզի բոլորը կարողանան Ձեզ լսել:
- Պատասխանեք հակիրճ և ըստ էության:
- Քննարկումը վարեք Հիսուսի և Աստվածաշնչի շուրջ:
- Կենտրոնացեք բուն թեմայի վրա, խուսափեք վիճելի հակասական հարցերից:

Հավաստիացրեք Ձեր խմբի անդամներին, որ Սուրբ Հոգին կընկալի Նրա Խոսքը, ինչպես նաև յուրաքանչյուր մասնակցի կյանքի հանգամանքները (հոգևոր ճանապարհի որ հատվածում էլ որ նրանք լինեն), և նրանցից յուրաքանչյուրին կսովորեցնի, թե ինչ է Նա ցանկանում, որ մասնակիցներն իմանան և կիրառեն իրենք կյանքում:

- Հավաքի վերջում մասնակիցներին հանձնարարեք Աստվածաշնչյան նոր հատված՝ մյուս շաբաթվա համար:

- Հորդորեք խմբի մասնակիցներին, որպեսզի նրանք խումբ հրավիրեն այլ մարդկանց և նոր մասնակիցներին հնարավորություն տան ցանկացած ժամանակ միանալ խմբին: Դա կստեղծի բարեհամբյուր և սիրալիր մթնոլորտ:
- Հավաքն ավարտեք կարճ աղոթքով:

Լրացուցիչ հարցեր՝ դասն ավելի արդյունավետ դարձնելու համար:
- Է՞լ ինչ է Ձեզ սովորեցրել Աստված:
- Կարո՞ղ եք ավելի մանրամասն բացատրել Ձեր պատասխանը:
- Ո՞վ է ցանկանում որևէ բան ավելացնել այս պատասխանին:
- Ի՞նչը է Ձեզ ամենաշատը տպավորեց կամ հուզեց Աստվածաշնչյան այս հատվածում:

Ներածություն.
Ծովային կրեաների շատ տեսակներ գտնվում են վերացման վտանգի տակ: Դա տեղի է ունեցել ոչ թե գիշատիչների, մարդկանց կամ շրջակա միջավայրի աղտոտման պատճառով, այլ ծովափի երկայնքով արհեստական լույսերի ավելացման պատճառով:

Աստված ծովային կրեաներին ստեղծել է այնպես, որ նրանք ծնվեն լիալուսնի ժամանակ: Երբ կրեաները դուրս են գալիս ձվերից, լուսնի լույսը նրանց ուղղություն է ցույց տալիս դեպի իրենց բնակության բնական միջավայրը՝ օվկիանոսը: Ծովային կրեաները ապրում են ջրում:

Գիտնականները զարմացան, երբ հայտնաբերեցին մեծ քանակությամբ փոքրիկ կրեաների, որոնք սատկել էին արհեստական լույսի ուղղությամբ գնալու պատճառով: Այդ արհեստական լույսի աղբյուրներն են շենքերը, փողոցի լապտերները, տրանսպորտը: Արհեստական լույսը շեղում է կրեաներին իրենց բնական միջավայրից, ինչի հետևանքով նրանք սատկում են:

Աստվածաշնչի ուսումնասիրությունը կբերի Ձեզ դեպի Հիսուսի հրաշալի լույսը: «Ես եմ աշխարհի լույսը... այն լույսը, որ առաջնորդում է դեպի կյանք» (Հովհաննես 8:12): Այն նաև կուղղորդի Ձեզ դեպի Նրա Խոսքը՝
«Իմ Խոսքը ճրագ է քո ոտքերի համար, և լույս քո ճանապարհի համար» (Սաղմոս 119:105), և կդարձնի Ձեզ Քրիստոսի լույսը խավար աշխարհում: «Դուք աշխարհի լույսն եք ... թող ձեր լույսը շողա մարդկանց առջև» (Մատթեոս 5:14):

Աստվածաշնչի ամենօրյա ընթերցման, մեդիտացիայի և Ձեր կյանքում Աստծո Խոսքի կիրառման շնորհիվ Դուք կսովորեք հեշտությամբ տարբերել թշնամիների արհեստական լույսը, կմնաք այն ճանապարհի վրա, որը լուսավորված է Աստծո լույսով, և Ձեր լույսը վառ կշողա Քրիստոսի համար՝ Ձեր տանը և Ձեր շրջապատում: Խորապես ուսումնասիրեք ԼՈՒՅՍ սերիայի չորս դասընթացները, որոնք հետազոտում են Հիսուսի կյանքը, փոխհարաբերությունները, հրաշքները և ուղերձները:

NBS2GO
ԼՈՒՅՍ © 2017 NBS2*GO*. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սկզբնապես հրատարակվել է անգլերեն լեզվով, որպես *LIGHT* © 2016 NBS2*GO*:
Թարգմանված է և ադապտացված է ըստ մշակութային առանձնահատկությունների՝ NBS2*GO*.-ի կողմից: http://www.nbs2go.com